

օրէնք հաստատելը ոչ պակաս քան զեօթին պորտ:

Պատասխանումեն սուրբ Հարց բնականարար, բուն՝ այս ինքն մերձաւոր արենակցութիւնից ցհռաւոր արենակցութիւն հարկ և օգտաւետ է *) այսպէս, մարդն է՝ ասումեն, բաղկացութիւն չորս տարրներէն. օրինակատարք այս չորս տարրաց հանդէպ պարտին արեան չորրորդ մասն ծննդական փոխանցմամբ սպառել տալ, որով ազգակցութիւն հեռացուցած, ապա խնամենալ: Չոր օրինակ, որդիք ունին միջնորդութեամբ մերձակցութեան ծնողաց՝ արեան բովանդակութիւն, և զաւակունք նոցա՝ զարեան կէս, թոռունք՝ զկիսոյ կէս և այլն, և ի սպառել արենակցութեան՝ պարտ է խնամենալ:

Գուցէ դարձեալ հետազօտուի իմանալոյ համար, թէ ո՞վ էր սուրբ Հարց այդքան բացարձակ իրաւունք տուել՝ այդ օրէնքին վճռական վերջակէտ տալոյ համար:

Եստուած՝ պատասխանում եմ, սորա են ասումէ Եռաքեալը՝ զորս եղ Եստուած յեկեղեցւոյ. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարդարէս, և երրորդ՝ զվարդապետս. (Ե. Կորնթ. ԺԲ, 18): Եւ զարձեալ, և նա եղաւ՝ այս ինքն՝ Քրիստոս, զոմանառաքեալս, զոմանս մարդարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս. (Եփես. Դ, 11):

(Ի յէրօքս.)

ՄԱՆՈՒԷԼ ՔԱՀԱՆԱՅ ԱՍՏՈՒԱՆԱՏՐԵԱՆԾ.

(*) Բժշկական արհեստ ապացուցանում է զանազան փորձերով թէ արենակցաց մէջ եղած լծակցութիւնը վնասումէ թէ ծնողաց ներքին զործիքական կարողութեան եւ թէ ծննդոց կազմակերպական տրամադրութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ *).

Բնական զիտութեան առարկայ են ոչ միայն երկինքն և երկիրս, ծովն և ցամաքը, բոյսերն և կենդանիներն, այլ և մարդն՝ արարածների զլիաւորը: Նկարագրական արուեստի բարձրագոյն նպատակն է՝ արտայայտել մարդկային դէմքի պատկերը, որ մինչև իսկ աստուածներին կյատկացուի — զեղեցկութիւն և կրքերը. այսպէս նաև բարոյական օրէնքը մարդին կհրաւիրէ դէպ ի ինքնածանօթութիւն, «մարդկային կեանքի բարձրագոյն նպատակն», ինչպէս կբացատրէ յոյն իմաստասէրների զլիաւորը, կամ «մարդկային բարձրագոյն առաքինութիւնն», ինչպէս կձայնէ եգիպտական մի հին արձանագիր Սայխում: Սոցա համաձայն, զիտութեան զլիաւոր

(*) Պ. Շաֆհաուզէնի այս հետաքրքրական յօդուածը թարգմանած ժամանակնիս զանց արմըր բնագրի ծանօթութիւններն էլ յաւելացնել, որ ոչ այլ ինչ էին՝ բայց եթէ անուններ այն զրբերի եւ լրագիրների, ուստի որ հեղինակը քաղել է իւր յօդուածի նիւթը: Զանց արինք, վասն զի չէինք յուսալ թէ այն Անգղիական եւ Գերմանական մատենների անունները պահելովնիս օգուտ մի լինի ընթերցողներին, որոց ամենամեծ մասին այն լեզուներն անծանօթ են. այլ աւելի օգտակար համարեցինք ծանօթարանել երկիրների եւ անձերի այն կարեւոր անունները, որ առ հասարակ բիշ յայտնի են մեր մէջ: Այս ծանօթութիւնները ընդհանրապէս քաղած ենք Բույլէի «Պատմութեան եւ աշխարհագրութեան բառարանէն»:

Շան. Թարգմ.

նպատակ կլինի զարձեւալ մարդն ուսումնասիրելը:

Բայց այս ուսումնասիրութեան ձեռնարկած ժամանակին՝ չպիտի բաւականանանք մեր անձնական «ես»-ը քննելով, կամ որեւիցէ մի անձնաւորութիւն չպիտի առնենք իբրեւ ճշգրիտ օրինակ բովանդակ մարդկութեան: Մեր ուսումնասիրութեան առջեւ հաւասար արժանիք պիտի ունենան ամեն աշխարհի, ամեն դարերի և զարգացման ամեն աստիճանի մարդերն՝ թէ եւրոպական քաղաքների ազնուացած բնակիչներն եւ թէ անապատի անկիրթ որդիները: Մարդի մասին շատ կարծիքներ կան, որ ամբողջ մարդկութեան չեն յարմարիր: Բանականութիւնն, որ մարդկային հոգին այնչափ կբարձրացնէ՝ խիստ անհաւասար չափով զարգացած է այլևայլ մարդերի մէջ, ինչպէս և մարմնի զրօնազրութիւնը, որ երբեմն ստորանալով մինչեւ կապիկինին չափ այլանդակ կլինի, և երբեմն էլ մեզ գեղեցկութեան տիպար կներկայացնէ իւր վայելչութեամբ:

Բնութիւնն՝ որ աշխարհիս ամեն մի գոտին կհարստացնէ տեսակ տեսակ բոյսերով և կենդանիներով, մարդկային դէմքին ևս տարբեր գծազրութիւններ է տուել այլևայլ լայնութիւններէ տակ, ուստի և մարդը ճշտիւ քննելու համար՝ ամենեւին պէտք չենք նորան բաժանել իւր շրջապատող բնութենէն: Հնդկի¹⁾ որսորդը

նոյնչափ սեպհական է իւր խոտաւէտ անապատներին և դոմէշի երամակներին՝ որչափ և հարաւ — ամերիկացին իւր նախնական անտառներին, ուր կբնակին ջրախոզ, կապիկ և թռչնակներ: Ափրիկէի սեւամորթն անբաժան է իւր արմաւենիներէն՝ առիւծներէն և ընձուղաններէն: Հնդկաստանցին իւր բրնձի արտերէն և փղերէն: Ասպլանդացին և ինքնակիր ցիզը (самодёв) չեն կարող լինել առանց եղջերուների, ինչպէս և եւրոպացիներն՝ իւրեանց ներկայ զրութեան մէջ՝ առանց վարուցանքի և եղջերաւոր պաճարների (ընտանի անասունների): Բայց երբ մեք զմայլելով կզիտենք ազատ կենդանին, որ ուրախ է, առանց որեւիցէ կերպով նկողելու՝ իւր ոյժերը կզարգացնէ, կնկատենք որ նա աւելի կտոտրեալ արարած է քան թէ ընտանի կենդանին, որ մեր կամքին կենթարկուի, մեզ համար կաշխատի և մեր պիտոյքին համար կկերակրուի: Իսկ երբ ուշադրութեամբ դիտենք վայրենի մարդը՝ բոլորովին հակադարձ զգացմունքի կուգանք, այս ինքն՝ վայրենի կենդանին իւր ցեղին մէջ կատարեալ կերելի մեզ, — նա բնութեան սահմանած որեւէ նախազօժին կհետեւի, իւր գոյութեամբ կզուարճանայ, և մեք տեղիք չենք ունենար նորա վիճակին վերայ ցաւելու: Բայց երբ վայրենի մարդի կեանքն ուսումնասիրենք՝ կհամոզուինք, որ մեր և նոցա մէջ ահագին անդունդ կայ, մինչեւ իսկ կվարանինք՝ թէ նա արդեօք մարդկային սեռին կվերաբե-

(1) Որպէս զի շարունակ Ամերիկացի եւ Ասիացի, կամ արեւելեան եւ արեւմտեան հնդկի բառերն աւելորդ տեղը չգործածենք՝ Ամերիկացի կամ արեւմտեան այս ցեղերին հնդկի անունը յատկացուցինք, իսկ ասիացի կամ արեւելեան ցեղերին հնդկ-

կասեանքի անունը՝ երբ բուն Հնդկաստանի մէջ լինին, եւ հնդկացի՝ երբ հնդկաստանէն դուրս լինին:

րի. միևնոյն ժամանակ արհամարհանքով և զգուանքով վերան կնայինք, կամ աւելի ազնիւ զգացմունք մի կունենանք, այս ինքն կարեկցութիւն, որ մեր մէջ կծնեցնէ իղձ նորա վիճակը բարւոքելու:

Երբէք չտեսնուած անծանօթ մարդիկ պատկերը անակնկալ տպաւորութիւն կանէ քաղաքակիրթ մարդերին վերայ: Ամերիկայի գտնուած ժամանակ, երբ եւրոպայիներն առաջին անգամ այստեղի վայրենիները տեսան՝ ժամանակին անուանի բժիշկը Պարացելս բացագանչեց, թէ Ա. Գրքի Ազամէն զատ պէտք է Ամերիկացի մի Ազամ ևս լինի. վասն զի անհնար էր ենթադրել, որ իրարմէ այնչափ տարբեր մարդկային ցեղերը մի ընդհանուր նախահայրէ սերած լինէին: Պօղոս Գ. պապն էլ հարկադրեցաւ առաջին կոնդակով յայտարարել, թէ բնիկ Ամերիկացիներն իսկապէս մարդիկ են և ոչ միայն յարմար՝ այլ և հակամէտ են քրիստոնէութիւն ընդունելու: Ասկէ զատ Պարոլոս Ե. կայսրը՝ նոցա ազատ հրատարակեց: Տարակոյս չկայ, որ սատանան սև գոյնով նկարագրելու սովորութիւնը մեր մէջ մտած է սևամորթներին անձոնի դէմքերին մեր վերայ արած տպաւորութենէն. և որովհետև սպիտակամորթները սևերի զլեւն հարուածն անպակաս կանէին՝ նոցա հետ աւելի վատ վարուելով քան թէ անբան անասունի հետ, զարմանալի չէ ուրեմն, որ սևամորթներն ևս իւրեանց կողմէն չար ոգին սկսան նկարագրել ձերմակ գոյնով:

Ստրկութեան սկզբունքը պաշտպանողների գլխաւոր փաստն այս էր, թէ սևամորթներն նոյն իսկ իւրեանց գոյութեամբ ստորին արարածներ են, և ծնունդով ա-

մենեին հաւասար չեն սպիտակ մարդերին, ուրեմն և արժանի չեն ազատութեան, այլ սահմանուած են միայն ծառայելու ընտրեալ գոյն ցեղերին: Այսպիսի դատողութիւններ՝ զեռ մօտ ժամանակներս — 1865, առարկել էին ստրկատէրներն իւրեանց ընդարձակ շրջաբերականին մէջ: Սակայն դեռ 1791ին Պետր կրտսերն աշխատելով գերեվածառութիւնը ջնջել՝ իւր հայրենակիցներին կյիշեցնէր, թէ իւրեանց կողմի վերայ էլ երբեմն մարդազոհներ կը մատուցուէին և գերեվածառութիւնը կը ծաղկէր, ուրեմն և Հռովմի ծերակոյտն իրաւունք կունենար Բրիտանացի բարբառոնների մասին այնպէս խօսել՝ ինչպէս այժմ Անգղիացիները կխօսին Ափրիկէի վայրենիների վերայ:

Լաւ - Ազգաս եպիսկոպոսը կամենալով բարւոքել Հնդիկների վիճակը՝ որ անտանկի աշխատութեան լծին տակ կհնծէին, Սպանիացիներին ցոյց տուեց Ափրիկէի սևամորթները, թէ նոքա իբնէ աւելի տոկուն կազմուածք և շատ ոյժ ունին, բայց իհարկէ չզուշակեց թէ նոր աշխարհը յանուն գերեվածառութեան նզովքի սև կրնիք պիտի դնէ նորա ձակատին: Ստրկատէրութեան խնդիրն Ամերիկայի մէջ մի դժնդակ պատերազմ ծնեցուց, որով Միացեալ Աահանգներն երկու անհաշտելի խմբերի երկպառակուեցան: Պատերազմի առիթն առեւտրական շահերն էին. բայց հիւսիսայինների գերազանցութիւնը կախումն ունէր ուղղակի ստրկութենէն որ հարաւայինների մէջ կտիրապետէր, որոնք միայն ստրուկներ պահելով՝ չէին կարող հիւսիսայիններին հետ մրցիլ, որ անդադար նորոգ և թարմ ոյժեր կստանային ա-

դատ քաղաքների հետզհետե բաղմանա-
րով:

Սակայն զիտութիւնը չընդունիր թէ սե-
ւամորթներն անընդունակ են կրթութեան,
և հհերքէ այն փաստերը որ մէջ կրերուն
միայն շահասիրութեամբ կամ բարոյքի
կոշտութեամբ: Չհամարենք, զերմանացի
անգամագննին, առաջին անգամ ցոյց
տուաւ թէ սեւամորթի մարմնի կազմուած-
քը շատ մասերում աւելի ստոր է քան
թէ եւրոպացիինը, յիշեցնելով թէ՛ ազ-
նուական պատկերէն աւելի կամ պակաս
տարբերիլը կմտեցնէ դէպի կապիկների
մարմնակազմութիւնը: Չհամարենք ցոյց
տուած այս փաստն անմեղակ է, և կվե-
րաբերի ստորին զարգացում ունեցող
մարդկային ամեն ցեղերին: Յետոյ Տիլը-
ման ևս նոյն զիտութեան ղիմեց, որ նա
իւր ազգու վճիռն արտասանէ ստրկու-
թեան ամօթալի գոյութեան դէմ, և միև-
նոյն ժամանակ կապացուցանէր՝ թէ Աֆ-
րիկէի սեւամորթի ուղեղը մեծութեան կող-
մէ եւրոպացիինէն ամենեւին վար չմնար:
Եւս զրութիւնն ըստ ամենայնի ծիշղ չէ.
վասն զի ծանաչուած է արդէն, որ ստորին
ցեղէ անհատի ուղեղն, եթէ ըստ մեծու-
թեան բարձրագոյնէն վար չմնայ ևս՝ սա-
կայն պակաս զարգացած կլինի: Օրինակ,
մի հոտէնառու²⁾ կնոջ ուղեղը՝ Գլասիո-

լէի և Մերշէլի (Gratiolet, Marshale) նկարա-
զրածին նայելով՝ աւելի կմտնեայ կենդա-
նական ուղեղների կազմուածքին: Սակայն
սեւամորթներն՝ այս ստորին զրութեան
մէջ լինելովն հանդերձ՝ կարող են բարձ-
րանալ, վասն զի նոցա ուղեղների մե-
ծութիւնն և ձեւը շատ յարմարաւոր են
բարեփոխուելու, ինչպէս ամեն գործարա-
նաւոր մարմին բնութեան մէջ. և մարդն
խիկապէս այս առաւելութիւնն ունի, որ
զատապարտուած չէ միշտ մնալու այն զր-
ութեան մէջ, ինչպէս որ բնութիւնը նո-
րան կազմել էր. այլ կարող է զարգաց-
նել և կատարելացնել իւր անձնաւորու-
թիւնը:

Մարդ որչափ որ բարձր աստիճանի
զարգացման հասած լինի՝ այնչափ էլ ա-
րագ կաճի նորա զօրութիւնը. իսկ վայ-
րենիների կրթութիւնն այնչափ աննշա-
րելի քայլերով կյառաջադիմի, որ մեզ
շատ անգամ անշարժ կերեի: Մեք իրա-
ւունք չունինք տարակուսելու՝ որ բոլոր
ցեղերն էլ զարգանալու յարմարութիւն
ունին, վասն զի նոցանէ մի քանիին, կամ
առաւել ծիշան ասելով, միայն Աովկաս-
եան ցեղին վիճակուած բարձրագոյն զար-
գացումը ոչ թէ նորա ի բնէ սեպհական
գերազանցութենէն է, այլ միայն հետե-
ւանք է կենսական յաջող շատ պայման-
ների, ինչպէս են, երկիրի մասնաւորապէս
յարմարաւոր զիրքը, հողի պտղաբերու-

(2) Հոտէնտոտները Հարաւ - Ափրիկէի 25°—
52° հարաւային լայնութեան եւ 45°—23° արեւել-
եան երկայնութեան մէջ բնակող վայրենի ցեղերն
են. նոցա երկրին մէջ է կազմուած այժմեան Բարե-
նայ գլխի զաղթականութիւնը: Երկու զխաւոր ցե-
ղի կրածունն, բուն հոսսեհոսներ, որ աւելի էա-
րաւորեալ են, կենդանիներ կոպտեն եւ պղնձ
թանկ գիտեն, եւ սոցա հարաւ - արեւելքը բոշխման

կամ Սաարմեր, որ Ափրիկէի ամենալայրենի ցեղն
են, իւրեանց որսով եւ արմատներով կկերակրուին:
Առաջիններին մէջ քրիստոնէութիւնն արդէն մուտ
գործել է Հողանդացի բարոյիչների ձեռքով, իսկ
երկրորդները դեռ կռապաշտութեան մէջ կթա-
րափին:

Թիւնք, ի վաղուց հաստատուած հազոր-
դակցութիւնները, որոնցմէ յառաջ եկան
պատմական մեծամեծ անցքեր յօգուտ
բնակիչներին, որոնք այն ինչ մէկ անգամ
բարձրագոյն կրթութեան միջոցները ձեռք
բերին՝ միւսներէն յառաջ անցան և այ-
նուհետև սոցա միշտ իրենցմէ յետ թողին:
Յայտնի է, որ նոյն իսկ վայրենիները կը-
խօստովանին եւրոպացիներէ զերազանցու-
թիւնը, բայց սա միայն այն ժամանակ
կրբ երկու ցեղերը բաւական ժամանակ մի-
մեանց հետ յարաբերութիւն ունենան,
վասն զի առաջին անգամէն անձնասիրու-
թիւնը՝ որ մարդիս յատուկ է՝ նորանց
արհամարհանք կազդէ զէպ ի եւրոպացի-
ները: Այսպէս, օրինակ, Ամերիկացի բը-
նիկները կհամարին թէ Աստուած նախ
սեւամորթին ստեղծեց, յետոյ սպիտակին
և յետոյ՝ վերջապէս՝ կարմրամորթին:
Նոքա եւրոպացիներին ծաղրելու համար
«կաթնային երես» կանուանեն: Բեորդոն
(Burton) ճանապարհորդը կպատմէ թէ ա-
րեւմտեան Միւրիկէում Լէզ-բայի բնակիչ-
ներն իւր ետեւէն կգոռային. «նայեցէք այդ
սպիտակին, զա զառամեալ կապիկի շնը-
մանիւր»: Չէ կարելի մերժել որ վայրենիի
անապագան կամ փայլուն սեւ մորթը
և մկնախիտ անդամները նորա համար օգ-
տակար հակապատկեր կկազմեն թուլա-
մորթ եւրոպացիի զէմքին հետ, որ վարա-
կուած է «մաքի տկարութեամբ», ինչպէս
ասել էին մի անգամ, բայց անհրեքելի
կմնայ այս՝ թէ մտաւորապէս աւելի զար-
գացած մարդկային ցեղերի մարմնի ազ-
նուագոյն մասերը, զէմքն և սկաւառակի
ձեն աւելի զեղեցիկ կլինին: Չենք կարող
ասել թէ մարդկային զեղեցիկութեան վե-

րայ ունեցած գաղափարնիս անհիմն և
խախուտ է, կամ թէ ճաշակի դործ է,
որի մասին կարելի չէ վիճել. մարդի զծա-
ղրութեան այլանդակութիւնը յառաջ ե-
կած են կամ հիւանդութիւններէ, կամ
զէպի անասնական օրպր մերձենալէն: Այլ
և այլ ցեղերի հետազօտութիւնը անհրե-
քելի կերպով կապացուցանէ՝ թէ ինչպէս
մարդկային զէմքի պատկերն հետզհետէ
կրթալով իւր նախնական անձուռնի ձեւէն
հեռացել և ազնուացել է:

(Ի յեր-հայս.)

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԻԱՍԵԱՆԺ.

ԱԶԳԱՅԻՆ

ՏՕՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՈՒԱՆ

ՊԵՇԵՄԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՄԵՆԱՏԵՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՐԸ

ԳԷՈՐԳԵԱՆ ՏԵՄԱՐԱՆԻ

Ս. ԷԶՄԻԱՆՆԻ.

Յ 30 ն Սեպտեմբեր ամսոյ՝ յաւուր
տօնի Ս. Գէորգայ՝ Էջմիածնայ Մայր
Աթոռը փառաւոր հանդէսով կատա-
րեց Վեհ. Հայրապետի՝ Տ. Տ. Գէորգայ
Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսի ամե-
նայն Հայոց անուանակոչութեան եւ
նորա սխրագործութիւններէն գլխա-
ւորի՝ այն է՝ Գէորգեան ձեմարանի
Զորրորդ Տարեգարձի նշանաւոր տօնե-
րը: Եւ յիրաւի մեծ է Մայր Աթոռոյս
համար այս երկու տօների խորհուրդը